

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF THEOLOGY

# ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

## ԺԱ

# ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

# YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ  
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS  
YEREVAN - 2016

**ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԵՈՒՂԱՍԻԿԱԿԱՆ ՄՏ-ՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ:  
ԱՆՍԵԼՄ ՔԵՆՏԵՐԲԵՐԱՑՈՒ Ռ-ԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ  
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

*Լիզա Բարխոյան*

Արևմտյան եկեղեցու և աստվածաբանական մտքի պատմությանը նվիրված աշխատությունները վկայում են, որ X դարում և XI դարի առաջին տասնամյակներին հոգևոր դասի առանձին ներկայացուցիչներ ակտիվ ջանքեր էին գործադրում սխոլաստիկական ռացիոնալիզմի հիմունքներն ամրապնդելու ուղղությամբ: Բայց պետք է նշել, որ դա բավականին բարդ գործընթաց էր, որն աչքի էր ընկնում տարբեր հոսանքների անհաշտ պայքարով:

Սկզբնաղբյուրների վերլուծությունը թույլ է տալիս վստահորեն պնդել, որ այդ իրավիճակի ձևավորման գործում մեծ դեր է կատարել կաթոլիկ եկեղեցու պաշտոնական դիրքորոշումը: Կաթոլիկության ջատագովներից շատերը քաջ գիտակցում էին, որ աստվածաբանական համակարգերի «բանականացումը» միշտ չէ, որ հանգեցնում է ցանկալի արդյունքի: Նրանք ամենից առաջ մատնանշում էին աստվածաբանական ռացիոնալիզմի այնպիսի ծայրահեղ դրսևորումներ, ինչպիսիք էին դոգմաների բանական հիմնավորման ու մեկնաբանման փորձերը, որոնց ընթացքում հաճախ տեղ էին գտնում կաթոլիկյան ուղղադավանությանը անհարիր բազմաթիվ դրսևորումներ (ինչպիսիք էին, օրինակ, պանթեիզացման միտումը և այլն), այդ պատճառով էլ աստվածաբանական ռացիոնալիզմի դեմ համակարգեցված պայքար սկսվեց, որը շարունակվեց մինչև XIII դար<sup>1</sup>:

<sup>1</sup> Աստվածաբանական ռացիոնալիզմի ծայրահեղությունների դեմ կաթոլիկ եկեղեցու և նրա առանձին ներկայացուցիչների պայքարը բավականին համառ էր ու տևական: 1054թ. Վերջելլիի սինոդը դատապարտեց Բերենզարիոս Տուրացու ռացիոնալիստական համակարգը և նրան զրկեց եկեղեցական հաղորդությունից: Հետագայում ևս Բերենզարիոսը բազմիցս դատապարտվեց կաթոլիկ եկեղեցու և հայրերի կողմից: 1050 թ. Լևոն IX պապը, 1210 թ. Փարիզի ժողովը և Իննոկենտիոս III պապը բանադրեցին Էրիուգենի «Բնության բաժանման մասին աշխատությունը», իսկ 1225 թ. Հոնորիոս III պապի բուլլայով Էրիուգենի նշված աշխատությունը խարոյկի դատապարտ-

Ու թեև աստվածաբանական ռացիոնալիզմը դեռևս գտնվում էր լինելիության փուլում, նրա ներկայացուցիչների համար համառ ջանքերով արևմտյան աստվածաբանական համակարգերում աստիճանաբար գոյության իրավունք էր ստանում բանականության և տրամաբանական մտածողության դերը՝ անգամ իռացիոնալ երևույթների մեկնության գործում:

Աստվածաբանական սխոլաստիկայի պատմության համակարգում XI դարը առանձնահատուկ տեղ է գրավում: Ընդհանուր առմամբ այդ դարաշրջանը կարելի է բնութագրել իբրև **հավատի և բանականության փոխհարաբերության հարցի շուրջ ռացիոնալիստական և իռացիոնալիստական հոսանքների պայքարի շրջան:**

Իռացիոնալիստական օրթոդոքսիայի ծայրահեղ ներկայացուցիչները անդրադառնալով լայն տարածում ստացած հավատի ու բանականության, աստվածաբանության ու փիլիսոփայության փոխհարաբերության հարցերին, ոչ միայն անփոփոխ կերպով հանդես էին գալիս բանականության նկատմամբ աստվածաբանության անառարկելի առավելության դիրքերից, այլև պահանջում էին քրիստոնեության համակարգից մեկընդմիջտ դուրս հանել փիլիսոփայությունը: Իռացիոնալիզմի չափավոր թևի ներկայացուցիչները, հակառակը, արևմտյան մշակույթի, կրթության ու գիտության համակարգում կարևորելով կաթոլիկ եկեղեցու ունեցած բացառիկ դերը, գտնում էին, որ փիլիսոփայությունն իր տեղը պիտի ունենա աստվածաբանության կառուցվածքում: Կաթոլիկ աստվածաբանների այդ թևի ներկայացուցիչների գլխավոր փաստարկն այն էր, որ փիլիսոփայությունը կարող է նպաստել հավատքային ճշմարտությունների ընկալմանը: Այդ իսկ պատճառով էլ նրանք հռչակեցին, որ աստվածաբանության համակարգում փիլիսոփայությունը պետք է տեղ ունենա միմիայն իբրև «խոնարհ սպասուհի»:

---

վեց: **Соколов В. В.**, Средневековая философия, М., 1979, с. 111; Христианство (энцикл. словарь). Т. III, М., 1995, с. 264. Encyclopaedia of religion and ethics (ed. by James Hastings). V. 11, New-York, 1962, p. 242. Encyclopedia of Philosophy. V. 3-4, New-York. 1967, . p. 44. A history of the Christian Church ( ed. by Williston Walker...). New-York, 1985, p. 322.

Աստվածաբանական այդ հոսանքի ականավոր ներկայացուցիչը **Անսելմ Քենտերբերացին էր**<sup>1</sup>: Անսելմ Քենտերբերացու աստվածաբանական ժառանգությանը նվիրված ուսումնասիրությունների հանրաճանաչ տեսակետի համաձայն նրա աստվածաբանական-գիտական գործունեությունը բաժանվում է երեք փուլի:

Վաղ փուլը ընդունված է անվանել **քրիստոնեության փիլիսոփայության հիմնավորման** (բանականության ձգտող հավատի) փուլ: Այս շրջանում սխոլաստ-աստվածաբանի գրչին են պատկանում «Մոնոլոգ» տրակտատը, որում փիլիսոփայական հիմնավորում է տրվում Աստծո հատկանիշների հավատքային ըմբռնմանը և կեցությանը, «Համայնավուք» ("Proslogium" կամ «հավելում դատողության վրա») աշխատությունը, ուր տրված է Աստծո գոյաբանական ապացույցը արքա Գաունհիլդի տրակտատի դեմ ուղղված «Ջատագովություն ընդդեմ անմիտի պաշտպանությանը հանդես եկող», ինչպես նաև «Ճշմարտության մասին», «Բանի անձնավորման մասին», «Անարատ հղիության մասին» և այլ տրակտատներ:

Երկրորդ՝ **աստվածաբանական փուլում** (Սուասոնի 1092 թ. ժողովից հետոնխաջ շրջան) Անսելմը կաթոլիկ եկեղեցու դոգմատիկայի հավատարիմ և նրա մեկնության նպատակով հրատարակել է բացառապես աստվածաբանական բնույթի երկասիրություններ, ինչպիսիք են «Ս. Երրորդության հավատքի մասին», «Բանի անձնավորման մասին», «Անարատ հղիության մասին», «Ինչո՞ւ Աստված անձնավորվեց», «Հոգու էջքի մասին» աշխատություններ և այլն:

<sup>1</sup> Անսելմ Քենտերբերացին (1033-1109 թթ.) միջնադարյան սխոլաստիկական մտքի ականավոր ներկայացուցիչներից մեկն է: Հոգևոր գործունեությունը սկսել է 1060 թ. Բեկի վանքում (Նորմանդիա), որտեղ էլ 1078 թ. դարձել է վանահայր: 1093 թ. ընտրվել է Քենտերբերիի արքեպիսկոպոս: Կաթոլիկ եկեղեցու դերի բարձրացման անխոնջ գործունեության համար լուրջ տարածայնություններ է ունեցել անգլիական միապետներ Վիլիելմ II և Հենրի I հետ, որի պատճառով երկու անգամ հարկադրված լքել է եպիսկոպոսարանը: St'u История философии (под ред В. Ф. Александрова и др.). Т. I, М., 1940, с. 427-429; Философская энциклопедия, Т. ,1 М., 1960, с. 69, Христианство (энцикл. словарь). Т. II, М., 1995, с. 87; Encyclopedia of Philosophy. V. 1-2, New-York, London, 1972, p.; A history of the Christian Church ( ed. by Williston Walker...). p. 325-326.

Երրորդ փուլում Քենտերբերիի արքեպիսկոպոսը կրկին «վերադառնում է փիլիսոփայությանը», հիմնականում կամքի ազատության հարցերին: Այս շրջանին են վերաբերվում «Աստվածային նախասահմանման և կանխատեսման համաձայնեցման, ինչպես նաև ընտրության ազատության աստվածային ելանության մասին», «Կամքի մասին», «Աստծո կամքի մասին» և այլ աշխատություններ<sup>1</sup>:

IX-XII դդ. արևմտյան աստվածաբանական մտքի պատմությանը նվիրված մասնագիտական հետազոտությունները հիմնականում համերաշխում են այն հարցում, որ ժամանակի սխոլաստիկական համակարգերի առանցքային նպատակներից մեկը **գիտական աստվածաբանության այնպիսի համակարգ ստեղծելն էր**, որն ընդունակ լինի իր մեջ ներառել **քրիստոնեությանը բնորոշող երեք հիմնական՝ դրական, միստիկական և սպեկուլյատիվ տարրերը**: Համարվում է նաև, որ այդ բնագավառում առաջին ազդեցիկ քայլը կատարել է Անսելմ Քենտերբերացին<sup>2</sup>:

Վավերագրերը վկայում են, որ Անսելմի աստվածաբանության ելակետային կարևորագույն սկզբունքը **հավատի և բանականության փոխհարաբերության հարցն էր**: Հավատարիմ մնալով Օգոստինոսի կողմից հիմնարկված կաթոլիկյան ավանդույթներին, Անսելմը ևս գտնում էր, որ խնդրո առարկա հիմնահարցի լուծման գործում առաջնայինը «անառարկելի ու հավիտենական ճշմարտություններն» են՝ քրիստոնեական դոգմաները: Դրան զուգընթաց սխոլաստ-տեսաբանը համոզված է նաև, որ «հավատն ամրապնդելու հարցում» էական դեր ունի կատարելու փիլիսոփայությունը: Իսկ դա նշանակում է, որ Անսելմյան համակարգում հավատի և բանականության փոխհարաբերության հարցի շրջանակներում ուրույն տեղ է հատկացվում փիլիսոփայությանը (տրամաբանություն): Այս պարագայում նրա համար ելակետային է օգոստինականությունը, որի դիրքերից էլ սխոլաստը հռչակում է, որ փիլիսոփայությունն ամենևին էլ ինքնուրույն չէ, այլ հակառակը, կոչված է ծառայելու հավատքին, օժանդակելու հավատքի անանց ճշմարտությունները, բանականությամբ ընկալելու բարդ գործին: **Դրանում էլ կայանում է Էրիուզենական ռացիո-**

<sup>1</sup> **Соколов В. В.**, Средневековая философия, с. 138; A New Dictionary of Christian Theology (ed. by Alan Richardson and John Bowden). London, 1948, p. 557; **John Macquarrie**. Principles of Christian Theology. London, 1966, p. 14, 41.

<sup>2</sup> St'и Христианство (энцикл. словарь). Т. II, с. 665.

**նալիզմի էությունը:** Աստվածաբանական սխոլաստիկայի այդ սկզբունքը Անսելմը որակում է իբրև «խորհրդածություն բանական հավատքի մասին»: Ընդ որում, նա պնդում է, որ դա ամենևին էլ չպետք է հասկանալ իբրև վերացական կամ տեսական «խորհրդածություն», այլ մտավոր այնպիսի գործունեություն, որը կոչված է **բանականության առջև բացել աստվածային ճշմարտությունները և դրանով իսկ ամրապնդել հավատը:** Այստեղ էլ Անսելմի աստվածաբանության հանրահայտ եզրահանգումը. «**խորհել ոչ թե հավատալու համար, այլ՝ հավատալ հասկանալու համար**» (Neque enim quidero intellegere ut credam sed credo ut intelligam): Դժվար չէ հետևեցնել, որ ռացիոնալիստական աստվածաբանության առաջադրած լուծումը ոչնչով չի հակասում կաթոլիկյան հավատքի հիմնական սկզբունքներին: Անսելմի միտումը միանգամայն ակնհայտ է՝ պահպանելով հավատքի անառարկելի առաջնության ուսմունքը, այն ավելի ընկալելի դարձնել բանականության համար: Այդ դիրքերից էլ նա հռչակում է այն կարգախոսը, որ «**Հավատը նախորդում է բանականությանը**» (Fides quaerens intellectum): Իսկ դա վկայությունն է այն բանի, որ Անսելմի վարդապետության մեջ **Բանականությունը (=դիալեկտիկ և տրամաբանություն) դիտարկվում և արժևորվում է իբրև հավատքի ընկալման ու մեկնության հիմնական միջոց:**

Այսպիսով, հավատի և բանականության փոխհարաբերության հարցի լուծման ժամանակ կաթոլիկ եկեղեցու հավատքային սկզբունքներին անհամապատասխան Անսելմի ռացիոնալիստական աստվածաբանության համակարգում բանականությանը հատկացվում է ածանցյալ դեր:

Անսելմ Քենտերբերացին միաժամանակ հիմնավորում է, որ հավատի առաջնությունը այնպիսի արժեք է, որի նկատմամբ ոչ մի տարակուսանք չի կարող ծագել թե՛ բանականության և թե՛ հավատացյալների կողմից: Այս առումով միանգամայն օրինաչափ ու տիպական է Անսելմի համակարգը բնութագրող հետևյալ եզրակացությունը. «Կաթոլիկյան հա-

<sup>1</sup> Այդ մասին տե՛ս История философии (под ред В. Ф. Александрова и др.). Т. I с. 415; **Соколов В. В.**, Средневековая философия, с. 138; **Philip Schaff.** History of the Christian Church. V. 5. Edinburg, 1989, p. 602; Encyclopaedia of religion and ethics (ed. by James Hastings), V. 1, P. 558; A history of the Christian Church ( ed. by Williston Walker...) . p. 327, 329; A New Dictionary of Christian Theology (ed. by Alan Richardson and John Bowden), London, 1984 p. 223.

վատքը պետք է կասկածից վեր լինի: Ճանաչողությունը չի կարող հասնել հավատքի դոգմաների ակնառության, քանի որ նրանք (դոգմաները՝ Լ. Ք.) ինքնին օժտված են հավիտենական կայունությամբ ու անսասանությամբ: Ոչ մի քրիստոնյայի մոտ չպետք է հարց ծագի այն մասին, թե արդյո՞ք ճշմարիտ է այն ամենը, ինչին հավատում է կաթոլիկ եկեղեցին և ավանդում իր հայրերի բերանով: Քրիստոնյան առանց որևէ կասկածի պարտավոր է սիրել հավատը և ապրելով հավատի ցուցումներով ուսումնասիրել նրա (հավատի՝ Լ.Ք.) հիմնավորումները»<sup>1</sup>:

Քաջ գիտակցելով, որ հավատի և բանականության փոխհարաբերության հարցի ցանկացած բանական լուծում կարող է տարակարծություններ ծնել, Անսելմը հիմնավորում է փաստարկների մի ողջ համակարգ և տալիս դրանց մեկնությունը: Անառարկելի է, պնդում է աստվածաբանը, որ բանականությունը որոշվում է «հավատքի նորմերով ու ճշմարտություններով»: Բայց քիչ չեն և այն դեպքերը, երբ «հավատը մեկնաբանությունների (պարզաբանումների) կարիք է զգում»: Ահա այդպիսի իրավիճակների համար էլ **Աստված մարդուն օժտել է բանականությամբ**: Եվ, քանի որ, «բանականությունը ևս աստվածային ծագում ունի», ապա, ըստ Անսելմի, բանականության միջոցով մարդուն տրված է նաև «աստվածային ճշմարտությունները բացահայտելու և ընկալելու հնարավորությունը»: Այդ իսկ պատճառով էլ բոլոր այն դեպքերում, երբ բանականությունը կարողանում է բացահայտել հավատի հիմունքները, «...նա պետք է շնորհակալ լինի Աստծուն, իսկ եթե չկարողանա, պարտավոր է խոնարհել գլուխը և աղոթել»<sup>2</sup>: Անսելմյան ռացիոնալ աստվածաբանության այդ առանձնահատկություններն էլ կարող են բավարար հիմք հանդիսանալ այն եզրահանգման համար, որ «Անսելմի ուսմունքում բանականությունը և դիալեկտիկան (տրամաբանությունը՝ Լ. Ք. ) հանդես են գալիս իբրև **հավատի տեխնիկական միջոցներ** (ընդգծումը մերն է՝ Լ. Ք.)»<sup>3</sup>: Այդ ամենն էլ հիմք են տալիս մակաբերելու Քենտերբերի արքեպիսկոպոսի ռացիոնալիստական աստվածաբանության ևս մեկ առանձնահատկություն: Նրա համոզմամբ **բանականության և տրամաբանական մտածողության սահմաններն ու ազատությունը որոշվում է ոչ թե**

<sup>1</sup> История философии (под ред В. Ф. Александрова и др.). Т. 2 с. 428.

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> **Соколов В. В.**, Средневековая философия, с. 138.

**ինքնին, այլ միմիայն պաշտոնական դավանաբանությամբ: Ուստի դժվար չէ տեսնել, որ Անսելմի համակարգում բանականության և տրամաբանության ելակետն ու հանրագումարային արդյունքը հանդիսանում են դավանաբանության սկզբունքները, իսկ ռացիոնալիզմը՝ ծառայեցվում ֆիդերիզմին<sup>1</sup>:**

Աստվածաբանական այս դիրքորոշման շնորհիվ Անսելմի համակարգը շահեկանորեն տարբերվում է նախորդների և, հատկապես, Էրիուզենի աստվածաբանական ռացիոնալիզմից: Դրանից ուղղակի հետևում է նաև, որ Անսելմի համար ընդունելի է ռացիոնալ աստվածաբանության նեոպլատոնական մեթոդաբանությունը, քանի որ ոչ ճիշտ կիրառելու դեպքում այն կարող է հանգեցնել քրիստոնեական ուղղադավանությանը հակադրվող պանթեիստական եզրահանգումների: Այդ իսկ պատճառով էլ սեփական աստվածաբանական համակարգի համար նա ելակետ ընդունեց Օգոստինոսի կողմից համակարգեցված «Էկզեմպլարիզմի» մեթոդը՝ «քրիստոնեական կրեացիոնիստական ռացիոնալիզմը»: Վերը նշված համակարգային լուծումների արդյունքում էլ գործնականում **ավարտուն տեսք ստացավ վաղ սխոլաստիկան**, իսկ նրա համակարգող Անսելմը դեռևս իր կենդանության շրջանում ոչ միայն արժանի հեղինակություն էր վայելում կաթոլիկյան աշխարհում, այլև՝ արդար իրավամբ սկսեց կոչվել «երկրորդ Օգոստինոս»<sup>2</sup>:

Անսելմ Քենտերբերացու սխոլաստիկական ռացիոնալիզմը, այսպիսով, որակական նոր փուլ նշանավորեց արևմտյան աստվածաբանության մտքի պատմության մեջ: Ի տարբերություն Էրիուզենյան աստվածաբանության ռացիոնալիզմի, որը փորձ էր կատարում հիմնավորել Աստծու և կոնկրետ իրականության միասնության վարդապետությունը, Անսելմի աստվածաբանության ռացիոնալիզմը, հակառակը, գոյաբանական առումով բացարձակ ու «միակ իրական» սուբստանցիա է համարում Աստծո և նրա հայտնությամբ տրված դոգմաների համակարգը՝ քրիստոնեական հավատքը: Նա հիմնավորում է նաև, որ աստվածային որակների ընկալումը կարող է տեղի ունենալ ոչ թե կոնկրետ իրականության հետ կապված զգայությունների, այլ Աստծու կողմից մարդուն պարզևած բանականության միջոցով: Անսելմյան այդ եզրահանգումը

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 138-139:

<sup>2</sup> **Соколов В. В.**, Средневековая философия, с. 138.



տիրապետող դարձավ իր ժամանակի և հետագայի սխոլաստիկական ռացիոնալիզմի համակարգերի համար: Այդ ամենով հանդերձ ավարտուն տեսք ստացավ նաև հավատի ու բանականության փոխհարաբերության սխոլաստիկական հիմնարար տեսությունը: Այն հոչակում էր՝ թե միայն ի վերուստ տրված և «ընդհանուր հատկանիշներով» օժտված հասկացությունների միջոցով է հնարավոր «քրիստոնեական դոգմատիկայի բանական ընկալումը»: Այլ կերպ ասած, կաթոլիկյան հավատքի ջատագովության պաշտպանությամբ հանդես եկող աստվածաբանը համարում է, որ դավանաբանական ճշմարտությունների ընկալումը հնարավոր է միայն գերբնական գաղափարների, կամ աստվածային ծագման «հասկացությունների ռեալիզմի» միջոցով: Ընդ որում, բնագրային վերլուծությունը ցույց է տալիս, որ «աստվածային ծագման հասկացությունների» պաշտպանությունը Անսելմի համար ինքնանպատակ չէ: Անսելմը համոզված է, որ դրանք կոչված են ծառայելու մեկ հիմնական նպատակի, այն է՝ կազմակերպել հավատացյալների ճիշտ վարքագիծը և բոլորակերպ ծառայել եկեղեցու շահերին<sup>1</sup>:

**Հավատի և բանականության փոխհարաբերության սխոլաստիկական այդ ելակետի դիրքերից էլ Անսելմ Քենտերբերացին անդրադառնում է Աստծո էության և Աստծո կեցության հարցերին:** Անսելմի աստվածաբանական ժառանգությանը նվիրված հոգևոր ու տեսական հետազոտությունները լիովին համերաշխում են այն հարցում, որ Աստծու մասին նրա ուսմունքը խիստ համահունչ է օգոստինական լուծումներին, թեև ի տարբերություն վերջինիս իռացիոնալիստական դիրքորոշմանը

<sup>1</sup> Անսելմի աստվածաբանական ժառանգության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա բանականության համար մատչելի էր համարում Ս. Երրորդության, Հիսուս Քրիստոսի անձնավորման, փրկագործության, նախամեղքի, Հաղորդության, իրական գոյափոխության, և այլ դոգմատիկ սկզբունքներ (ուշ շրջանի սխոլաստիկ աստվածաբանները (Ալբերտ Մեծ, Թովմաս Աքվինացի, Դունս Սկոտ) մերժեցին բանականության գերազնահատման այդ միտումները և նշված դոգմաները տեղափոխեց ապոֆատիկ աստվածաբանության՝ հայտնությունների ոլորտ): Այդ մասին մանրամասները տե՛ս История философии (под ред В. Ф. Александрова и др.). Т., 2 с. 428; **Соколов В. В.**, Средневековая философия, с. 140-141; Христианство (энцикл. словарь). Т. I, М., 1993, с. 87; **Philip Schaff**. History of the Christian Church. V. 5. Edinburgh, 1989, p. 601; Encyclopaedia of religion and ethics (ed. by James Hastings), V. 1, p. 556, Encyclopedia of Philosophy. V. 1-2, p. 128 և այլն:

Քենտերբերիի արքեպիսկոպոսի մոտ գերակշռում է ռացիոնալիստական մեթոդաբանությունը<sup>1</sup>:

Վավերագրերը վկայում են նաև, որ խնդրո առարկա հարցում աստվածաբանի համար ելակետային է հանդիսանում աստիճանակարգված արարչագործության մասին օգոստինական ուսմունքը: Ըստ այդ տեսության ամեն մի գոյ անխուսափելիորեն ենթադրում է բացարձակ կեցության (Աստծո) առկայության: Անսելմի համոզմամբ այդ եզրահանգումը միանգամայն օրինաչափ է, քանի որ աստիճանակարգված ամեն մի համակարգ անխուսափելիորեն ենթադրում է որոշակի սահման: Այդ դիրքերից էլ Անսելմը հռչակում է, որ **արարչագործված աստիճանակարգության համար այդ սահմանը բացարձակ կեցությունն է՝ Աստված**, որն էլ հանդիսանում է միակ և իրական կեցությունը: Զարգացնելով այդ տեսակետը աստվածաբանը ձևակերպում է այն դրույթը, որ աստվածային կեցությունը **բացարձակ անհրաժեշտություն է**, քանի որ միայն նա է օժտված **միակության որակով**: Հիմնավորելով այդ եզրահանգման տրամաբանական հիմքերը Անսելմը ցույց է տալիս, որ, եթե գոյություն ունենային նման այլ կեցություններ, ապա նրանք կարող էին հանդես գալ միմիայն երկու որակով՝ ա) որպես ավելի բարձր բացարձակ կեցություն կամ էլ՝ բ) կեցություն, որը նույնական կլիներ աստվածային բացարձակ կեցության հետ: Այնուհետև սխոլաստ-աստվածաբանը հետևողականորեն արտաբերում է, որ առաջին դեպքում բազմակի կեցությունները չէին կարող աստվածային լինել այն պարզ պատճառով, որ ենթակայության մեջ կգտնվի ավելի բարձր կեցության նկատմամբ: Իսկ երկրորդ դեպքում այդ կեցությունները նույնական կլինեին բացարձակ կեցության հետ, հետևաբար օժտված կլինեն նույնպիսի բացարձակությամբ, այսինքն՝ նույնը կլինեին: Հետևաբար, եզրակացնում է Անսելմը **բացարձակ կեցությունը նույնական է ինքն իր հետ, ինքնին գոյ է և տիեզերական** (անսահման ու անվերջ) **ռեալություն**:

<sup>1</sup> История философии (под ред В. Ф. Александрова и др.). Т. 2, с. 428; **Соколов В. В.**, Средневековая философия, с. 140-141; Христианство (энцикл. словарь).Т. 1, с. 87; Encyclopaedia of religion and ethics (ed. by James Hastings), V. 1, p. 559, Encyclopedia of Philosophy. V. 1-2, p. 129; **Philip Schaff**. History of the Christian Church. V. 5, pp. 600-601.

Մխուլաստ-աստվածաբանը տրամաբանական վերլուծության շնորհիվ մակաբերում է նաև Աստծո այլ որակներ: Այդ շարքում Անսելմը նախապես շեշտադրում է **կատարելության** որակը: Նրա ուսմունքի համաձայն «բացարձակ կեցությամբ օժտված Աստված» նույնպիսի բացարձակ կատարելություն է և, որպես այդպիսին էլ նա հանդես է գալիս իբրև **Արարիչ Աստված**: Ընդ որում, երբ Ս. Գիրքը հաստատում է, որ Աստված աշխարհին արարել է ոչնչից, դա ամենևին էլ չի նշանակում, թե վերջավոր ու կոնկրետ իրականությունը ստեղծվել է մատերիայից: Հակառակը, աստվածաբանը պնդում է, որ մինչև արարչագործությունը, **կոնկրետ և վերջավոր առարկաները գոյություն ունեին Աստծո գիտակցության մեջ**: Այլ կերպ ասած, չկա ու չի կարող լինել ոչ մի արարչություն, եթե աստվածային բանականության մեջ նրան չի նախորդում համապատասխան «պատկերը»: Այստեղից էլ սխուլաստիկական ռացիոնալիզմի հիմնարար այն եզրակացությունը, որ կոնկրետ իրերի «նախապատկերները Աստծո ներքին խոսքերն են կամ գաղափարները»: Այդ ամենից օրինաչափորեն հետևում է նաև համապատասխան աստվածաբանական եզրահանգումը՝ «արարչագործությունը աստվածային խոսքի իրականացումն է, կամ արտապատկերումը»: Այլ կերպ ասած, այս հարցում **անսելմյան ռացիոնալ աստվածաբանությունը լիովին համահունչ է հայտնութենական աստվածաբանության հետ**, որի հետևանքով էլ նրանում **իրական աշխարհը նույնացվում է, ավելի ճիշտ, Օգոստինոսի հետևությամբ, համարվում է աստվածային բանականություն (հասկացությունների) իրականացումը**:

Ի մի բերելով այդ ամենը, կարող ենք մակաբերել Քենետերբերիի արքեպիսկոպոսի աստվածաբանական ևս մեկ հիմնարար եզրահանգում՝ Աստված (ընդհանուրը) հանդիսանում է **միակ** բացարձակն ու առաջնայինը, իսկ «կոնկրետ բազմազանությունը»՝ մատերիական աշխարհը, երկրորդական ու ածանցյալ է նրա նկատմամբ: Այդ ամենով հանդերձ անսելմյան համակարգում աստվածաբանության ռացիոնալիզմը ավարտուն ու դասական տեսք ստացավ, որն էլ իրենով նշանավորեց

<sup>1</sup> История философии (под ред В. Ф. Александрова и др.). Т. 2, с. 428; **Соколов В. В.**, Средневековая философия, с.141; Encyclopaedia of religion and ethics (ed. by James Hastings), V. 1, p. 559, Encyclopedia of Philosophy. V.1-2, p. 129; **Philip Schaff**. History of the Christian Church. V. 5, p. 601.

արևմտյան աստվածաբանության սխոլաստիկայի միանգամայն նոր մակարդակ:

Աներկբա է և այն, որ ի տարբերություն IX-X դարերի սխոլաստիկական այլ համակարգերի, անսելմյան աստվածաբանական համակարգը բնորոշող ռացիոնալիզմն ու մտահայեցողականությունը ոչ միայն տուրք չտվեց փիլիսոփայական ռացիոնալիզմին (ինչպես Էրիուզենը և այլոք), այլ, հակառակը, անմնացորդ ծառայության դրվեց քրիստոնեական կրեացիոնիզմի և արևմտյան աստվածաբանության շահերին:

Բայց, միշտ չէ, որ Անսելմը հավատարիմ է մնում իր իսկ որդեգրած սկզբունքներին: Այս կապակցությամբ գրեթե բոլոր վերլուծաբանները համերաշխում են այն հարցում, որ Աստծու Էության և աստվածային հատկանիշների մեկնության հարցում սխոլաստ-աստվածաբանը փորձ է կատարում հայտնութենական աստվածաբանության սկզբունքները լրացնել բանականության «որակներով»: Մասնավորապես, համարելով, որ աստվածային բացարձակ օբյեկտիվությունը՝ «ընդհանուր էությունը» վերին տնօրինությամբ տրվում է մարդուն, Անսելմը միանգամայն համոզված պնդում է, որ այդ հիման վրա բանականության համար լիովին հասանելի ու մեկնաբանելի են ոչ միայն քրիստոնեական դոգմաները (Ս. Երրորդության, Փրկագործության, Նախամեղքի, Իրական գոյափոխության, Քավության և այլն), այլև՝ Աստծու գոյության հարցը: Այդ հիմքի վրա էլ հրապարակ իջավ **Անսելմ Քենտերբերացու կողմից ձևավորված Աստծո գոյաբանական ապացույցը:**

Ինչպես աստվածաբանական այլ հարցերում, այս պարագայում ևս անառարկելի է համարվում այն, որ «...առաջին սխոլաստիկը» (Անսելմը՝ Լ. Ք.) այդ մեկնաբանության գործում կրկին շարունակում է այն, ինչն արդեն բովանդակվում էր Օգոստինոսի աստվածաբանական դոկտրինայում<sup>1</sup>: Վերլուծական և արժևորման տեսանկյունից խոսքն ամենից առաջ վերաբերում է աշխարհակառույցի օգոստինական ուսմունքին, ավելի կոնկրետ՝ «աստիճանակարգված կատարելությունների» մասին ուսմունքին: Օգոստինոսի ազդեցությամբ Անսելմը ևս հանգում է այն հետևության, որ արարչագործված աշխարհում գոյություն ունեցող **աստիճանակարգված «կատարելությունները» ենթադրում են «բացարձակ ու առաջնային կատարելության» գոյությունը:** Իսկ դա նշանակում է,

<sup>1</sup> Соколов В. В., Средневековая философия, с. 141.

որ աշխարհակառույցի գոյության և իրական աստիճանակարգության հիմքը հանդիսանում է Աստված: Բայց, ի տարբերություն Օգոստինոսի, որը աստվածաբանության այդ եզրահանգման հիմունքները բխեցնում է իռացիոնալիստական սկզբունքներից, Անսելմը շեղում է կատարում օգոստինականությունից և սխոլաստիկական ռացիոնալիզմի սկզբունքներին հավատարիմ մնալով առաջ է քաշում վարդապետական այն թեզը, որ «իբր բարձրագույն բարիք մարդուն տրված Աստծո ըմբռնումը» բանականության առջև ճանապարհ է բացում դեպի Արարչի գոյության ըմբռնումը: Վերը նշված ռացիոնալիստական մեթոդաբանական դիրքերից էլ սխոլաստ-աստվածաբանը բխեցնում և ապացուցում է Աստծո գոյությունը:

Մեզ հասած վավերագրերի վերլուծությունը, այսպիսով, ակնհայտ է դարձնում, որ **Աստծու գոյության հիմնահարցի պարագայում Անսելմ Քենտերբերացու սխոլաստիկական լուծման համար սկզբունքային նշանակություն են ձեռք բերում երկու գործոն՝ «Աստվածային բացարձակ կեցությունը» և նրա կողմից մարդուն տրված «Աստծու բանական ըմբռնումը» մտահայեցողական համադրումը:** Այլ կերպ ասած, Անսելմ Քենտերբերացին փորձ է կատարում մտահայեցողական-տրամաբանական վերլուծության հիման վրա Աստծու գոյաբանական ապացույցը մակաբերել «Աստծու, իբրև առավելագույն կատարելության» ըմբռնումը<sup>1</sup>:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե Աստծո էության մասին սխոլաստիկական-մտահայեցողական այդ ըմբռնումը այլ բան չէ, քան փիլիսոփայական-տրամաբանական սխալ էքստրապոլյացիա, որի հետևանքով նույնացվում են «Աստծո էություն» և «Աստծո կեցություն» հասկացությունները<sup>2</sup>: Բայց իրականում այդպես չէ: Աստծո գոյաբանական ապացույցը «... Աստծու, իբրև առավելագույն կատարելության ըմբռնումից ըն-

<sup>1</sup> Տե՛ս **Соколов В. В.**, Средневековая философия, с.142: Ըստ էության համահունչ եզրակացության են հանգում նաև բազմաթիվ աստվածաբան հետազոտողներ:

<sup>2</sup> Աստծո կեցության անսելմյան ապացույցը տրված է «Proslogion» աշխատության մեջ: Տե՛ս Anselmi S. Proslogion seu Alloquium de Die existentiae // **Migne J. P. PL**, T. CLVIII, chap. 2-3.

թանում է դեպի նրա ռեալ կեցության ըմբռնումը»<sup>1</sup>: Սկզբնաղբյուրները վկայում են, որ Անսելմ Քենտերբերացու համակարգում գոյաբանական ապացույցի ելակետ հանդիսացավ վարդապետական այն տեսակետը, որ **Աստված ճանաչելի է ոչ միայն ինքնին** (սպոնտան), **այլև՝ իր իսկ կողմից արարած մարդկային բանականության համար**: Այս պարագայում միանգամայն ակնհայտ է, որ, ի տարբերություն արևելյան միստիկ աստվածաբանության, անսելմյան ապացույցը համարում է, թե բանականությունն «Աստվածային տնօրինությամբ» «Ի զորու է ճանաչելու անճառելի աստվածային էությունը»:

Սկզբնաղբյուրներից համեմատական վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ Աստծո գոյաբանական ապացույցն առաջադրելիս Քենտերբերի արքեպիսկոպոսը հիմք է ընդունել քրիստոնեական հավատքի երկու հիմնարար՝ «մարդու աստվածակերպության» և «մարդու տնօրինական ներշնչման» վարդապետական դրույթները:

<sup>1</sup> Անսելմ Քենտերբերացու գոյաբանական ապացույցը ի սկզբանե միանշանակ կերպով չընկալվեց կաթոլիկյան միջավայրում: Նրա դեմ ընդդիմություն ծագեց «Proslogion»-ի հրատարակումից անմիջապես հետո: Մարմոտիեյի վանքի վանական Գաունիլոն «Անսելմի Պրոսլոգիոնի դատողությունների դեմ հանդես եկող անմիտի պաշտպանության գրքում» փորձ կատարեց ցույց տալու Աստծո գոյաբանական ապացույցի սնանկությունը այն առարկությամբ, որ մարդու կողմից օգտագործվող ամեն մի հասկացություն «հոգեբանական կառույց է», ուստի «հոգեբանական հասկացությունների» միջոցով չի կարելի հանգել «կեցության գոյության» որևէ փաստի հաստատման: Այլ կերպ ասած, Գաունիլոն պնդում է մտքի կեցության արմատական տարբերության ուսմունքը և այդ հիման վրա մերժում Աստծո գոյաբանական ապացույցը, որը, նրա համոզմամբ, «խարխլում է Աստծու նկատմամբ հավատը»:

Անսելմն իր աստվածաբանական դիրքորոշումը պաշտպանում է «Ջատագովությունը ընդդեմ անմիտ պաշտպանությամբ հանդես եկող» աշխատության մեջ: Մերժելով Գաունիլոյի փաստարկները նա պնդում է, որ «մտահայեցողական» (հասկացությունների) միջոցով «կեցության» իրական գոյությունը հաստատելը բնորոշ է ոչ թե «բոլոր կեցություններին», այլ միմիայն «բարձրագույն էության՝ Աստծո կեցությանը»:

Այդ մասին մանրամասները տե՛ս История философии (под ред В. Ф. Александрова и др.). Т. 2 с. 429; **Соколов В. В.**, Средневековая философия, с. 143-144; Философская энциклопедия, т. 1 М., 1960, с. 69, Христианство (энцикл. словарь).Т. I, с. 87; Encyclopaedia of religion and ethics (ed. by James Hastings), v. 1, p. 558, Encyclopedia of Philosophy. T 1-2, p. 128-129; **Philip Schaff**, History of the Christian Church. V. 5. p. 600:

Ուղղադավանության ջատագով աստվածաբանը համարում է, որ մարդը աստվածային նախախնամությամբ հանդիսանում է ամենակատարյալ արարածը, դրա համար էլ նա կրում է «Աստծո պատկերը» և, միաժամանակ, աստվածային նախախնամությամբ մարդն օժտվել է բարձրագույն բարիքով՝ բանականությամբ և ճանաչողական հնարավորություններով: **Մարդու ճանաչողական որակները, այսպիսով, շնորհ է, որը նա «ի վերուստ պարզև է ստացել տնօրինական ներշնչմամբ»:** Իսկ դա նշանակում է, որ մարդը աստվածներից միակն է, որն ունի «գաղափարները» ճանաչելու հնարավորություն: Աստվածային բարեգթության շնորհիվ ճանաչող մարդը «գերբնական լուսավորման» պահին իր համար բացահայտում է միանգամայն նոր աշխարհ՝ «աստվածային գաղափարների» աշխարհը: Դա ևս կատարվում է Աստծու նախանշած ուղիով, որպեսզի ճանաչող սուբյեկտը հասու լինի ոչ միայն ռեալ գոյի էությանը, այլև՝ գոյերի նախահիմքին՝ Աստվածային կատարյալ կեցության էությանը և փառաբանի նրա անճառելի մեծությունը:

Այսպիսով, ի տարբերություն էրիուզենի աստվածաբանական ռացիոնալիզմի, որը Աստծո ճանաչողական հնարավորությունը փաստարկելու միտումով նեոպլատոնական էմանացիայի հիման վրա **նույնացնում էր արարող ու արարված** (մակրո և միկրո) **աշխարհները**, Անսելմի սխոլաստիկական համակարգում մարդը հանդես է գալիս իբրև կրավորական ու ածանցյալ էակ, որը բոլորակերպ կախված է գերբնական կեցությունից և որին գերբնական էությունը հասանելի է միայն աստվածային բարեգթության շնորհիվ: Իսկ դա նշանակում է, որ Անսելմ Քենտերբերացին երկրորդելով Օգոստինոսին և նրա հետևությամբ պնդում է, որ **«բարձրագույն ճանաչողությունը» կարող է իրական դառնալ միայն այն դեպքում, եթե դա «տնօրինված է անժամանակյա ու հավերժական կեցության»՝ Աստծո կողմից:**

Կաթոլիկյան դավանաբանական հիմնարար սկզբունքներին համապատասխանող աստվածաբանական ռացիոնալիզմի այդ լուծումն էլ դարձավ հասուն սխոլաստիկայի կարևորագույն տարրերից մեկը:

Անսելմ Քենտերբերացու սխոլաստիկական համակարգի ձևավորման արևմտյան աստվածաբանական մտքի փնտրտուքները չավարտվեցին: Ողջ XI-XII դարերի ընթացքում նոր ուժով ծավալվեց սխոլաստիկական աստվածաբանության հակադիր երկու հոսանքների՝ ռեալիզմի ու նոմինալիզմի միջև դեռևս IX դարում սկիզբ առած պայքարը:

**ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԽՈԼԱՍՏԻԿԱԿԱՆ ՄՏՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ:  
ԱՆՍԵԼՄ ՔԵՆՏԵՐԲԵՐԱՅՈՒ ՈԱՅԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ  
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

*Լիզա Քարիմյան*

*Քանայի բառեր - վաղ սխոլաստիկա, նեոպլատոնականություն, պլատոնականություն, պանթեիզմ, ապոֆատիկ աստվածաբանություն, ռացիոնալիզմ և իռացիոնալիզմ, կեցություն, թեոֆանիա, ռեալիզմ, նոմինալիզմ*

Հոդվածում ցույց են տրվում ռացիոնալիստական համակարգերի նվաճումներն ու սահմանափակությունները, ընդ որում, վեր է հանվում այն ողջ դրականը, որը արևմտյան աստվածաբանության դավանաբանական հիմունքների պաշտպանության գործում կատարել է վաղ սխոլաստիկայի համակարգող Անսելմ Քենտերբերացին: Անփոփոխ կերպով հանդես գալով կաթոլիկ աստվածաբանության համակարգում՝ նա կարևորեց նաև բանականության տեղն ու դերը՝ դրանք որակելով իբրև մարդուն տրված աստվածային բարեգթություն: Աստվածաբանական այդ ելակետերի հետևողական զարգացման շնորհիվ Անսելմը ոչ միայն ավարտին հասցրեց վաղ սխոլաստիկայի փուլը, այլև՝ ձևավորեց Աստծո գոյաբանական ապացույցը:

**СИСТЕМАТИЗАЦИЯ ЗАПАДНОЙ СХОЛАСТИЧЕСКОЙ МЫСЛИ.  
РАЦИОНАЛИСТИЧЕСКОЕ БОГОСЛОВИЕ АНСЕЛЬМА  
КЕНТЕРБЕРИЙСКОГО**

*Лиза Каримян*

*Ключевые слова - Ранний схоластицизм, неоплатонизм, платонизм, пантеизм, апофатическое богословие, рационализм и иррационализм, бытие, теофания, реализм, номинализм*

В статье анализируются достижения и ограничения рационалистических систем, более того показывается все положительное, которое в защите доктринальных основ западного богословия совершил координатор раннего схоластицизма Ансельм Кентерберийский. Неизменно выступая в системе католического богословия, он выделил также роль и значение рациональности в качестве божественной милости, данной человеку. Благодаря развитию этих богословских основ, Ансельм не только завершил стадию раннего схоластицизма, но и сформировал рационалистическое доказательство бытия Бога.



---

**THE COORDINATION OF THE WESTERN SCHOLASTIC MIND.  
THE RATIONALIST THEOLOGY OF ANSELM OF CANTERBURY**

***Liza Karimyan***

***Keywords:*** *Early scholasticism, neoplatonism, platonism, pantheism, apophatic theology, rationality and irrationality, being, theophany, realism, nominalism*

The article presents the achievements and limitations of rational systems, moreover, it underlines all the positive things that Anselm of Canterbury, coordinator of early scholastic system, was made in defense of the dogmatic foundations of Western theology. Constantly performing in the system of catholic theology, he also stressed the place and role of rationalism qualifying them as a divine mercy given to human. Due to the progressive development of theological foundations, Anselm not only completed the early phase of Scholastic system, but also formed ontological proof of God.